



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 28-Ա/2

«18» հունվարի, 2021 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ
ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2021»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 4-րդ գլխի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Կազմակերպել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի կողմից անցկացվող կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված համատեղ գիտական ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2021» միջազգային մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական ծրագրերի ցանկերում փոփոխությունների կատարման լիազորությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոջանին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոջանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի հետ համատեղ հայտարարում է կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված համատեղ գիտական ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2021» **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Գիտության կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման առցանց համակարգի միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2021թ. փետրվարի 26-ը ներառյալ (հայտերի ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Գիտության կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտական մշակումների պատվերի ձևավորման և ինովացիոն ծրագրերի բաժնից՝ զանգահարելով 010 210140 (105) կամ 099 202099:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՐԱՎԵՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ
ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ԲՀ ԳՏՊԿ - 2021» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ**

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեն (այսուհետ՝ ԲՀ ԳՏՊԿ), նպատակ ունենալով նպաստել կիրառական հետազոտությունների ոլորտում երկկողմ համագործակցության զարգացմանը, հայտարարում են կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված համատեղ գիտական ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ԲՀ ԳՏՊԿ - 2021» ՄՐՑՈՒՅԹ** (այսուհետ՝ Մրցույթ):
- 1.2. Կոմիտեն 12 կամ 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի հրավերի Հավելված N 1.1-ում նշված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառներին և մասնագիտություններին համապատասխան գիտական հետազոտությունների իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում ծրագրի «Միջազգային գիտական համագործակցություն» ծախսային ենթածրագրի միջոցներից:
- 1.3. Մրցույթին մասնակցության գիտական ծրագրերի հայտերը (այսուհետ՝ Հայտ) ներկայացվում են Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության գիտական խմբերի կողմից: Հայաստանյան խմբում կարող են ընդգրկվել 2-4 անդամներ՝ ներառյալ խմբի ղեկավարը (այսուհետ՝ Ղեկավար):

- 1.4. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Ղեկավարը պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:
- 1.5. Ծրագրի շրջանակներում համատեղ ստացած գիտական արդյունքի նկատմամբ հեղինակային իրավունքի շուրջ ծագած վեճերը հայաստանյան և բելառուսական կողմի ղեկավարները կլուծեն խորհրդակցությունների և քննարկումների միջոցով:
- 1.6. Կոմիտեի և ԲՀ ԳՏՊԿ ֆինանսական աջակցությամբ իրականացված հետազոտության արդյունքները պետք է հրապարակվեն գիտական բաց պարբերականներում և ամսագրերում: Հետազոտությունների արդյունքները հրապարակելիս պետք է նշել Կոմիտեի և ԲՀ ԳՏՊԿ կողմից ստացած աջակցության մասին՝ նշելով Ծրագրի ծածկագիրը, օրինակ.

- Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ _____ և ԲՀ ԳՏՊԿ _____ գիտական համալսելի ծրագրին տրամադրված ֆինանսական աջակցության շրջանակներում:

- Исследование выполнено при финансовой поддержке КН МОНКС РА и ГКНТ РБ в рамках совместного научного проекта ___ и ___ соответственно.

- The work was supported by the Science Committee of MESCS RA and State Committee of Science and Technology of RB in the frames of the joint research project _____ and _____ accordingly.

Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու Ծրագրի արդյունք և հետևաբար չի ընդունվելու հաշվետվության մեջ:

- 1.7. Ծրագրի իրականացման 12 ամիսը լրանալուց հետո Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան) Հաշվետվություն, որի հիման վրա Մասնագիտական փորձագիտական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) տալիս է եզրակացություն՝ Ծրագրի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:
- 1.8. Ծրագրի իրականացման ընթացքում Կոմիտեն կարող է իրականացնել մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել Խորհրդին:
- 1.9. Մշտադիտարկման արդյունքները Խորհուրդը պետք է հաշվի առնի՝ Ծրագրի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս:

1.10. Ծրագրի ավարտից հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

1.11. Կոմիտեն և ԲՀ ԳՏՊԿ կարող են ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի անոտացիան և Հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Խմբի անդամներին ներկայացվող պահանջները

2.1. Հայաստանյան խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ, ինչպես նաև Ծրագրի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Ծրագրի հայաստանյան խմբում կարող են ընդգրկվել գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում և բուհերում ներգրավված գիտաշխատողները և դասախոսները, առկա և հեռակա ուսուցման ասպիրանտները, մագիստրանտները (ինգամյա կրթական ծրագրի դեպքում՝ ավարտական կուրսի ուսանողները) և մագիստրոսի աստիճան ունեցող անձինք:

2.3. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ 2 մրցութային (այդ թվում՝ միջազգային) թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման, ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության, գիտական խմբերի մեկնարկի աջակցության կամ գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության մրցույթի շահառուների), եթե այդ թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Ծրագրերի ֆինանսավորման սկիզբը:

2.4. Խմբի ղեկավար կարող է լինել այն անձը, ով՝

2.4.1. ծնվել է 1951 թվականի հունվարի 1-ից հետո,

2.4.2 ունի գիտական աստիճան,

2.4.3 ունի առնվազն 5 տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 տարիների ընթացքում միջազգային

գիտատեղեկատվական շտեմարաններում (Web of Science կամ Scopus) հրապարակված առնվազն 2 գիտական հոդված:

2.5. Խմբի անդամները (ներառյալ Ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.6. Խմբի անդամներից առնվազն մեկը պետք է լինի 1986 թվականի հունվարի 1-ից հետո ծնված: Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ՝

- Հայաստանի Հանրապետության և (կամ) Արցախի Հանրապետության գինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ հավելյալ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար հավելյալ 1 տարով:

2.7. Խմբի կատարողը պետք է հանդիսանա առնվազն մագիստրատուրայի ուսանող (ինգամյա կրթական ծրագրի դեպքում՝ ավարտական կուրսի ուսանող) կամ դիպլոմավորված մասնագետ (բակալավրի աստիճան ունեցող անձը կամ բակալավրիատի ուսանողը չի կարող ընդգրկվել խմբում)

2.8. Մրցույթի հայաստանյան և բելառուսական կողմերի հայտատուները միմյանց հետ համաձայնեցնում են ներկայացվող Ծրագրի բովանդակությունը, որը կարող է տարբեր լինել՝ կախված կողմերի առջև դրված խնդիրներից, սակայն ներկայացված Ծրագրի հայերեն և ռուսերեն վերնագրերը պետք է համընկնեն: Համաձայնեցված և ձևավորված Հայտը հայաստանյան կողմը ներկայացնում է Կոմիտե, իսկ բելառուսական կողմը՝ ԲՀ ԳՏՊԿ:

2.9. Հայտը չի քննարկվում, եթե՝

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ թեմայի/ծրագրի հետ,
- Ղեկավարի կողմից նախկինում իրականացված գիտական թեմայի (ծրագրի) վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- Ղեկավարի կողմից ներկայացվել է Բիալի ցանկերում (Beall's list, <https://beallslist.net/>) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների,

- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
- ներկայացվել է միայն Կոմիտե կամ միայն ԲՀ ԳՏՊԿ,
- Կոմիտե կամ ԲՀ ԳՏՊԿ ստացվել է Հայտերի ընդունման համար հայտարարված ժամկետներից ուշ,
- չի լրացվել ըստ Հայտերին ներկայացվող պահանջների,
- պարունակում է պետական կամ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

2.10. Հայտի համապատասխանությունը վերը նշված պայմաններին երաշխավորում է Ղեկավարը:

3. Հայտ ներկայացնելը

3.1. Հայտը լրացնում և ներկայացնում է Ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2021 թվականի փետրվարի 26-ը ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

3.2. Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- Ղեկավարի դիմումը (Հավելված N 1.2),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆակուլտետի գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը, որը պետք է պարունակի տեղեկատվություն Ծրագրի կիրառական նշանակության և արդիականության վերաբերյալ: Եթե Կազմակերպությունը չունի գիտական (գիտատեխնիկական) խորհուրդ, ապա պետք է ներկայացվի տվյալ բնագավառի ՀՀ որևէ այլ հանրային գիտական կազմակերպությունների գիտական խորհրդի եզրակացություն,
- խմբի մինչև 35 տարեկան անդամի (անդամների) վերջին դիպլոմի և անձնագրի պատճենները, իսկ ասպիրանտ կամ մագիստրանտ (ինգամյա կրթական ծրագրի դեպքում՝ ավարտական կուրսի ուսանող) հանդիսանալու դեպքում՝ համապատասխան տեղեկանք(ներ)ը:

3.3 Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 808 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2021 թվականի մարտի 5-ը ներառյալ:

3.4 «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2021» մրցույթին մասնակցության համար բեյառուսական կողմին ներկայացվող պահանջներին կարելի է ծանոթանալ <http://www.gknt.gov.by> կայքից:

4. Ծրագրերի գիտական փորձաքննությունը

4.1. Կոմիտեում ուսումնասիրվում է Մրցույթին ներկայացված և Համակարգում ծածկագիր ստացած Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է Խորհրդի քննարկմանը:

4.2. Խորհրդի որոշմամբ հաստատվում է Մրցույթի պայմաններին բավարարող և գիտական փորձաքննության ենթակա Հայտերի ցանկը:

4.3. Յուրաքանչյուր Հայտ գիտական փորձաքննության է ենթարկվում Խորհրդում ներառված երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը (Հավելված 2):

4.4. Խորհուրդը, անհրաժեշտության դեպքում, գիտական փորձաքննության նպատակով կարող է ներգրավել անկախ փորձագետներ:

4.5. Գիտական փորձաքննության ժամանակ փորձագետի առավելագույն գնահատականը 44 միավոր է:

4.6. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:

4.7. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Ծրագրի արդի վիճակը, գիտական և գիտատեխնիկական նորույթն ու արդիականությունը, գիտական մեթոդները, ակնկալվող արդյունքի բնութագիրը, դրանց կիրառական նշանակությունը, միջազգային համագործակցության նպատակահարմարությունը, հայաստանյան խմբի կազմը, նախահաշվի հիմնավորվածությունը, Ծրագրի կատարման ազդեցությունը ՀՀ տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացման վրա, ինչպես նաև Մրցույթի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

4.8. Կոմիտեի, Խորհրդի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն

այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

4.9. Գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով ձևավորում է վարկանիշային ցանկ և ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

4.10. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

4.11. Ֆինանսավորման երաշխավորված Ծրագրերի ընդհանուր քանակը որոշվում է՝ հիմնվելով հայաստանյան և բելառուսական կողմերի փորձաքննության արդյունքների վրա և ելնելով Մրցույթի համար նախատեսված յուրաքանչյուր կողմի ֆինանսական հնարավորություններից:

4.12. Կոմիտեն Համակարգի (grants.scs.am) միջոցով Խմբերի ղեկավարներին տրամադրում է գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագիտական եզրակացությունը (ապահովելով փորձագետի անանունությունը), շեմային գնահատականը, Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը:

4.13. Մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված Ծրագրերի և դրանց ղեկավարների ցանկը տեղադրվում է Կոմիտեի պաշտոնական կայքում:

4.14. Կոմիտեն կազմակերպությանը տրամադրում է տվյալ կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Ծրագրերի ցանկը, Ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Ծրագրի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

5. Այլ դրույթներ

5.1. Ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի ղեկավարի և կատարողների միջև, ինչպես նաև Կազմակերպության ղեկավարի և Ծրագրի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր:

5.2. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր Հրավերի «5.1» կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

- 5.3. Կողմերից յուրաքանչյուրը ֆինանսավորում է իր կողմի գիտական խմբի աշխատանքների իրականացման ծախսերը:
- 5.4. Հայաստանյան գիտական խմբի տարեկան ֆինանսավորման առավելագույն ծավալները կազմում են **2 250,0**, **3 375,0** և **4 500,0** հազար ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 2, 3 և 4 անդամից բաղկացած գիտական խմբերի համար:
- 5.5. Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն տարեկան գումարը չպետք է գերազանցի **1 680,0**, **2 520,0** և **3 360,0** հազար ՀՀ դրամը՝ համապատասխանաբար 2, 3 և 4 անդամից բաղկացած գիտական խմբերի համար:
- 5.6. Եթե աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարը փոքր է վերոնշյալ ծավալներից, ապա տարբերությունը կարող է նախատեսվել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:
- 5.7. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման և/կամ ծառայությունների ծախսեր: Բոլոր ծախսերը պետք է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:
- 5.8. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել Ծրագրի ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին մասնակցության համար:
- 5.9. Գործուղումների նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:
- 5.10. Գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի, բայց ոչ ավելի, քան՝ ամսական 1500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսյա կտրվածքով):
- 5.11. Նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում է Կազմակերպության ղեկավարի իրավասությանը թողնված գումարը, որով Կազմակերպության ղեկավարը ապահովում է Կազմակերպության գործունեությունը և ստեղծում Ծրագրի կատարման

համար անհրաժեշտ պայմաններ: «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված Վերադիր ծախսերը 12-ամսյա հաշվարկով չպետք է գերազանցեն 75 հազար ՀՀ դրամը:

5.12. Ղեկավարը կարող է դիմել Կոմիտե խմբի կատարողի համարժեք փոփոխություն կատարելու՝ ըստ տարիքային խմբի և գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի կամ խմբի կատարողների (բացառությամբ մինչև 35 տարեկան անդամի) թիվը մեկով կրճատելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ: Խմբի կատարողների թվի կրճատման դեպքում Ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.1 Մաթեմատիկա
- 1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ
- 1.3 Ֆիզիկա և աստղագիտություն
- 1.4 Քիմիա
- 1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ
- 1.6 Կենսաբանական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

- 2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն
- 2.2 Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
- 2.3 Մեխանիկա
- 2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն
- 2.5 Քիմիական տեխնոլոգիաներ
- 2.6 Նյութագիտություն
- 2.7 Բժշկական սարքաշինություն
- 2.8 Էկոլոգիա
- 2.9 Կենսատեխնոլոգիա
- 2.10 Նանոտեխնոլոգիա

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 3.1. Ընդհանուր բժշկություն
- 3.2. Կլինիկական բժշկություն
- 3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն
- 4.2 Բուսաբուծություն
- 4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
- 4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՅՈՅՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՅԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____ (հասցե)
_____ (հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ - ԲՀ ԳՏՊԿ - 2021» միջազգային մրցույթին մասնակցության համար ներկայացված « _____ » ծածկագրով Հայտը:

Հաստատում եմ, որ ծանոթացել եմ վերոնշյալ մրցույթի հրավերի պայմաններին և վերջիններիս հետ համաձայն եմ:

Դիմող՝ _____ (ստորագրություն) (_____)
(անուն ազգանուն)

« _____ » _____ 2021 թ.

ԾՐԱԳԻՐ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 13 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

Ծրագրի անվանումը

Անոտացիա

Խնդրի արդի վիճակի վերլուծությունը

Նպատակը և խնդիրները

Արդիականությունը

Հետազոտական Ծրագիրը (մինչև 4 էջ)

Իրականացման եղանակները, մեթոդաբանությունը

Օրացուցային պլանն՝ ըստ եռամսյակների (ցանկալի է նաև Գանտի աղյուսակ)

Ծրագրի իրականացման համար առկա և անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները

Բելառուսի Հանրապետության հետ համագործակցության նախադրյալները, ինչպես նաև նպատակահարմարությունը և ակնկալվող արդյունքները

Ծրագրի կատարողների ձեռքբերումները և փորձը տվյալ բնագավառում

Ակնկալվող արդյունքը

- նոր տեխնոլոգիա
- կատարելագործված տեխնոլոգիա (տեխնոլոգիական գործընթաց)
- ծրագրային փաթեթ
- նախատիպ կամ մոդել
- փորձնական կամ լաբորատոր նմուշ
- այլ

Ակնկալվող արդյունքի՝

1) տեխնիկական ցուցանիշները

2) կիրառության բնագավառները

Ծրագրի մշակվածության ներկա փուլը/աստիճանը

- կոնցեպցիա
- հիմնարար գիտական հետազոտություն
- կիրառական հետազոտություն
- փորձարարական մշակում
- այլ (լրացնել հաջորդող վանդակում)

Նմանակների հետ համեմատության ցուցանիշները՝

հիմնական տեխնիկական առավելությունները և/կամ թերությունները/ ցուցանիշները

հիմնական տնտեսական առավելությունները և/կամ թերությունները/ ցուցանիշները

հիմնական բնապահպանական առավելությունները և/կամ թերությունները/ ցուցանիշները

այլ

**ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐԸ¹**

| | |
|--|--------------|
| Ի՞նչ ծավալի ֆինանսավորում է անհրաժեշտ Ծրագրի արդյունքների առևտրայնացման հետագա ներդրումային ծախսերի համար: | հազ. դրամ |
| Ի՞նչ ժամանակահատվածներում է հնարավոր հասնել ծախսաձածկման: | Ամիս |
| Քանի՞ աշխատատեղ կարող է ստեղծվել Ծրագրի արդյունքների առևտրայնացման և հետագա արտադրության կազմակերպման համար: | |
| Ո՞վքեր կարող են լինել Ծրագրի արդյունքի հնարավոր սպառողները (սպառողների ու պահանջմունքի մոտավոր քանակները առևտրայնացումից հետո առաջին երեք տարիների համար): | |
| Սպառողների ո՞ր պահանջմունքները կբավարարվեն Ծրագրի արդյունքների առևտրայնացման միջոցով (ներկայումս ինչպե՞ս են բավարարվում այդ պահանջմունքները և ի՞նչ առավելություններ կամ թերություններ ունի ձեր առաջարկը ներկայիս լուծումների համեմատ): | |
| Ի՞նչ մասնագետներ են անհրաժեշտ նախատեսվող արդյունքի առևտրայնացման և հետագա արտադրության համար: | |
| Արդյո՞ք նախատեսվող բիզնեսը կարող է լինել շահութաբեր՝ առևտրայնացումից հետո առաջին երեք տարիների համար: | |
| Ինչպիսի՞ այլ տնտեսական արդյունք կարող է գրանցվել Ծրագրի արդյունքների առևտրայնացման շնորհիվ: | |
| Տնտեսության մեջ ներդրման համար անհրաժեշտ ներդրումներն ու ժամկետները | |

¹ Լրացվում է համապատասխան տվյալների առկայության դեպքում:

Փորձագիտական գնահատման թերթիկ

| | |
|----------------|--|
| Հայտի վերնագիր | |
| Հայտի ծածկագիր | |
| Հայտի ղեկավար | |

| Չափանիշի անվանումը | Չափանիշի նկարագրությունը | Գնահատակ անը | |
|----------------------------|---|--------------|--|
| 1. Գիտական նորույթը | Նորույթի մակարդակը (աստիճանը) | | |
| Շատ բարձր | Աշխարհում իրականացվում է առաջին անգամ | 5.0 | |
| | | 4.5 | |
| Բարձր | Համահունչ է կամ համապատասխանում է աշխարհում առաջին անգամ իրականացվող համանման հետազոտական ծրագրերին | 4.0 | |
| | | 3.5 | |
| Համեմատաբար բարձր | Հայաստանում իրականացվում է առաջին անգամ | 3.0 | |
| | | 2.5 | |
| | | 2.0 | |
| Ոչ բավարար բարձր | Առանձին գիտական փորձի մակարդակի է | 1.5 | |
| | | 1.0 | |
| | | 0.5 | |
| Բացակայում է | Հայտնի է | 0 | |
| Մեկնաբանություններ | | | |
| 2. Արդիականությունը | Գիտության և տեխնիկայի զարգացման արդի մակարդակի հետ համապատասխանության աստիճանը | | |
| Շատ բարձր | Ունի առաջնակարգ միջազգային մակարդակի նշանակություն | 5.0 | |
| | | 4.5 | |
| Բարձր | Ունի առաջնակարգ նշանակություն Հայաստանում | 4.0 | |
| | | 3.5 | |
| Համեմատաբար բարձր | Ունի կարևոր նշանակություն | 3.0 | |
| | | 2.5 | |
| | | 2.0 | |
| Ոչ բավարար բարձր | Ունի որոշակի նշանակություն | 1.5 | |
| | | 1.0 | |
| | | 0.5 | |
| Արդիական չէ | Նշանակություն չունի | 0 | |
| Մեկնաբանություններ | | | |
| 3. Ներկա վիճակը | Ծրագրի ներկա վիճակը և փորձը | | |
| Շատ բարձր | Առկա է կիրառական հետազոտությունների իրականացման մեծ փորձ | 3.0 | |
| | | 2.5 | |
| Բարձր | Առկա է կիրառական հետազոտության իրականացման որոշակի փորձ | 2.0 | |
| | | 1.5 | |
| Ոչ բավարար բարձր | Առկա է հետազոտական աշխատանքների իրականացման որոշակի փորձ | 1.0 | |
| | | 0.5 | |

| | | | |
|-----------------------------|---|-----|--|
| Ցածր | Ծրագրի ուղղությամբ փորձ չկա | 0 | |
| Մեկնաբանություններ | | | |
| 4. Ակնկալիքը | Ակնկալվող արդյունքի բնույթը | | |
| Շատ բարձր | Ակնկալվող արդյունքը ապրանք/արտադրություն է | 3.0 | |
| | | 2.5 | |
| Բարձր | Ակնկալվող արդյունքը փորձարարական մշակում է կամ ծառայություն | 2.0 | |
| | | 1.5 | |
| Ոչ բավարար բարձր | Ակնկալվող արդյունքը կիրառական կամ հիմնարար հետազոտություն է | 1.0 | |
| | | 0.5 | |
| Բացակայում է | Ակնկալվող արդյունքը բացակայում է | 0 | |
| Մեկնաբանություններ | | | |
| 5. Կատարողների կազմը | Կատարողների կազմի մասնագիտական որակավորման համապատասխանությունը հետազոտության իրականացմանը | | |
| Բարձր | Մասնագիտական որակավորմամբ և թվաքանակով խումբը համապատասխանում է հետազոտության լրիվ ծավալով և պատշաճ որակով իրականացմանը | 5.0 | |
| | | 4.5 | |
| | | 4.0 | |
| Համեմատաբար բարձր | Մասնագիտական որակավորմամբ համապատասխանում է հետազոտության լրիվ ծավալով իրականացմանը, բայց թվաքանակով ավելի է | 3.5 | |
| | | 3.0 | |
| | | 2.5 | |
| | | 2.0 | |
| Ոչ բավարար բարձր | Մասնագիտական որակավորմամբ և թվաքանակով չի համապատասխանում հետազոտության լրիվ ծավալով իրականացմանը | 1.5 | |
| | | 1.0 | |
| | | 0.5 | |
| Ցածր | Մասնագիտական որակավորմամբ և թվաքանակով չի համապատասխանում հետազոտության իրականացմանը | 0 | |
| Մեկնաբանություններ | | | |
| 6. Մեթոդաբանությունը | Նախատեսվող հետազոտության մեթոդաբանության հիմնավորվածության մակարդակը | | |
| Բարձր | Օգտագործվելու են ժամանակակից մեթոդներ/տեխնոլոգիաներ, որոնք ապահովվելու են բարձր մակարդակի արդյունք | 3.0 | |
| | | 2.5 | |
| Միջին | Նախատեսվող մեթոդները չեն կարող ապահովել բարձր մակարդակի արդյունք | 2.0 | |
| | | 1.5 | |
| | | 1.0 | |
| Ցածր | Նախատեսվող մեթոդները չեն կարող ապահովել հետազոտության նպատակների իրականացումը | 0.5 | |
| | | 0 | |
| Մեկնաբանություններ | | | |
| 7. Առևտրայնացում | Ակնկալվող արդյունքի առևտրայնացման հեռանկարը | | |
| Շատ բարձր | Ունի միջազգային առևտրայնացման հեռանկար | 5.0 | |
| | | 4.5 | |
| Բարձր | Ունի մեծ առևտրայնացման հեռանկար Հայաստանում | 4.0 | |
| | | 3.5 | |
| Համեմատաբարբարձր | Ունի որոշակի առևտրայնացման հեռանկար Հայաստանում | 3.0 | |
| | | 2.5 | |
| | | 2.0 | |

| | | | |
|--|--|-----|--|
| Ոչ բավարար բարձր | Ունի թույլ հեռանկար | 1.5 | |
| | | 1.0 | |
| | | 0.5 | |
| Բացակայում է | Հեռանկար չունի | 0 | |
| Մեկնաբանություններ | | | |
| 8. ՀՀ տնտեսության կարիքներին համապատասխանությունը | Ակնկալվող արդյունքի համապատասխանությունը ՀՀ տնտեսության կարիքներին | | |
| Շատ բարձր | Ամբողջությամբ բխում է ՀՀ տնտեսության կարիքներից | 5.0 | |
| | | 4.5 | |
| Բարձր | Բխում է ՀՀ տնտեսության կարիքներից, բայց առաջնահերթությունների մեջ չէ | 4.0 | |
| | | 3.5 | |
| Միջին | Մասամբ բխում է ՀՀ տնտեսության կարիքներից | 3.0 | |
| | | 2.5 | |
| | | 2.0 | |
| Ցածր | Թույլ է բավարարելու ՀՀ տնտեսության կարիքները | 1.5 | |
| | | 1.0 | |
| | | 0.5 | |
| Բացակայում է | Չի բխում ՀՀ տնտեսության կարիքներից | 0 | |
| Մեկնաբանություններ | | | |
| 9. Միջազգային համագործակցությունը | ԲՀ տվյալ կազմակերպության հետ համագործակցության նպատակահարմարությունը | | |
| Շատ բարձր | Ամբողջությամբ հիմնավորված է, կա արդյունավետ համագործակցության փորձ և այն կարող է նպաստել ակնկալվող արդյունքի ձեռքբերմանը | 5.0 | |
| | | 4.5 | |
| Բարձր | Համագործակցությունը նոր է, սակայն կարող է նպաստել ակնկալվող արդյունքի ձեռքբերմանը | 4.0 | |
| | | 3,5 | |
| Համեմատաբար բարձր | Համագործակցող կազմակերպությունն ունի որոշակի կապ Ծրագրի և ակնկալվող արդյունքների հետ | 3.5 | |
| | | 3.0 | |
| | | 2.5 | |
| Միջին | Համագործակցող կազմակերպությունն էական կապ չունի Ծրագրի և ակնկալվող արդյունքների հետ | 2.0 | |
| | | 1.5 | |
| | | 1.0 | |
| Ցածր | Համագործակցող կազմակերպությունը որևէ կապ չունի Ծրագրի և ակնկալվող արդյունքների հետ | 0 | |
| Մեկնաբանություններ | | | |
| 10. Նախահաշվի հստակությունը և մեկնաբանությունը | Ծրագրի նախահաշվի հիմնավորվածության աստիճանը | | |
| Շատ բարձր | Ամբողջությամբ հիմնավորված է, գնման ենթակա սարքերը կամ նյութերը բխում են Ծրագրի կարիքներից | 5.0 | |
| | | 4.5 | |
| Բարձր | Ամբողջությամբ հիմնավորված է, գնման ենթակա սարքերը կամ նյութերը մասամբ ենթաբխում Ծրագրի կարիքներից | 4.0 | |
| | | 3,5 | |
| Համեմատաբար բարձր | Մասամբ է հիմնավորված, գնման ենթակա սարքավորումները չեն կարող ապահովել Ծրագրի լիարժեք իրագործումը | 3.5 | |
| | | 3.0 | |

| | | | |
|--|---|-----|--|
| | | 2.5 | |
| Միջին | Թույլ է հիմնավորված, առկա են ոչ անհրաժեշտ կամ ուռճացված ծախսեր կամ գնման ենթակա սարքավորումներ չկան | 2.0 | |
| | | 1.5 | |
| | | 1.0 | |
| | | 0 | |
| Ցածր | Նախահաշիվը չի համապատասխանում Ծրագրի կարիքներին | 0 | |
| Ծրագրի փորձագիտական գնահատականը (1-10 կետերի գումարը) | | | |
| Մեկնաբանություններ | | | |

Գնահատողի անուն ազգանուն

Ստորագրություն